խանձու եւ հակառակութեան զՔրիստոս քարոզեն եւ ոմանք՝ ի սիրոյ» (Փլպ. Ա 15), «Զանձն չկամէր (չհամարէր՞) արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում» (Փաւ. Բուզ. 59):

Ո հոլովում «Առ սէր քո արարի զկամս քո ի վերայ Բաբելոնի» (Եսթ. ԽԸ 14), «Առ գութ տիրասիրութեանն, զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին» (Փաւ. Բուզ. 170), «Առ սէր քո արարի զկամս քո ի վերայ Բաբելոնի» (Եսթ. ԽԸ 14), «Առ գութ տիրասիրութեաննս զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին» (Փաւ. Բուզ. 170), «Առ ատել զնոսա Տեառն եհան զնոսա կոտորել (Բ Օր. Թ 28), «Ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի» (Մատթ. Զ 27):

Շատ պարզ է, որ առ+ներգոյականի յիշուած կրկին նշանակութիւնները՝ տեղ եւ պատճառ արտահայտող՝ թե՛ կառուցուածքով եւ թէ՛ իմաստով կապուած են իրարու:

Մէջբերուած օրինակներուն համար օգտագործուած աղբիւրներ
(Աստուածաշունչի գիրքերը հարկ չենք տեսներ դնել)

(Եզնիկ) Եզնկայ Կողբացւոյ՝ Եղծ Աղանդոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1826:

(Ագաթ.) Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

(Փաւ. Բուզ.) Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

(Ոսկեբ. Մատթ.) Յովհաննու Ոսկեբերանի՝ Յաւետարանագիրն Մատթէոս, Ա. եւ Բ. հատ. միասին, Վենետիկ, Ս. Ղազար, 1826: Գ. հատորն ալ՝ նոյն թուականին:

(Ոսկեբ. Ես.) Յովհաննու Ոսկեբերանի՝ Մեկնութիւն Եսայեայ Մարգարէի, Վենետիկ, Ս. Ղազար, 1880:

(Ոսկեբ. Պօղ. Ա.) Յովհաննու Ոսկեբերանի՝ Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Ա. հատ., Վենետիկ, Ս. Ղազար, 1862: Բ. հատորն ալ՝ նոյն թուականին:

(Եփրեմ) Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, Բ. հատ., 1835, Դ. հատ., 1836, Վենետիկ, Ս. Ղազար, 1862:

(Բարսեղ, Վեց.) Սրբոյն Բարսղի Ճառք վասն վեցօրեայ Արարչութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1830:

(Սեբեր.) Սեբերիանոսի Եմեսացւոյ Ճառք ժե., Վենետիկ, Ս. Ղազար, 1830:

(Կիւրեղ Ե. Կոչումն) Կիւրղի Երուսաղեմայ Հայրապետի՝ Կոչումն Ընծայութեան, Վիեննա, Մխիթարեան տպ. 1832:

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԻՉԸ ԵՒ ԻՐ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Լեւոն Խաչերեան

Եղիշէ պատմիչը իր ապրած ժամանակաշրջանին տեղի ունեցած Վարդանանց Հայոց մեծ պատերազմի դիւցազներգուն է, ընդ որում մասնակցի եւ ականատեսի իսկ իւրայատկութեամբ: Կենսագրական տեղեկութիւնները յարակից վկայութիւններով՝ չափազանց սակաւ են: Աւանդաբար մատենագրական հաղորդումներով հաւաստւում է, որ Եղիշէն Հայոց Դպրապետ Մաշտոցի կրտսերագոյն աշակերտներից է եղել եւ Խորենացու ուսումնակիցներից, վերջինիս հետ միասնաբար այլ ուսումնականների հետ բարձրագոյն ուսումնառական գործուղմամբ մեկնել է Աղեքսանդրիայի հռչակաւոր ակադեմիան. այստեղ է համաշխարհային քրիստոնէական գրականութեանը եւ տեսութեանը հմտացել, եօթ Ազատ Արուեստների կրթական բովով անցել, հնագոյն քաղաքակիրթ լեզուների տիրապետել եւ գիտութիւններով ծանրաբեռն վերադարձել հայրենիք, երբ արդէն վախճանուել էին երախտաշատ Ուսուցիչները՝ Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոցը: Մեկնելով այս իրողութիւնից՝ Եղիշէի ծնունդը ենթադրւում է 410-412 թուականներին:

Հին ճառընտիրներում հաւաստւում է, որ 451 թուականին Պարսից տիրապետութեան դէմ բռնկուած հայ ազատագրական պատերազմի ժամանակ եւ տեսող լեալ ամենայն անցիցն որ անցին ընդ զօրսն Հայոց ի Յազկերտէ Պարսից արքայէ»[1]:

Հայոց պատերազմին իր մասնակցութեան մասին Եղիշէն ինքը մի շարք անգամներ տարբեր առիթներով իր պատմագրութեան մէջ անդրադառնում է: Իր Ընծայականում վկայում է՝ պատուիրատուին հաշուետուութիւն ներկայացնելիս. «Արդ որովհետեւ ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցո՛ւք ուստի արժան է սկսանել. թէպէտ եւ ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ: Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում պատահեցաք եւ մեք իսկ ականատես լինելով»:[2]

Նաեւ Աւարայրեան դիւցազներգութեան բուն շարադրանքը հիւսելիս մի շարք առիթներով պատմիչը ակնարկում եւ շեշտում է իր մասնակցութիւնը: Բնութագրելով նախապատրաստուող ճակատամարտին անմիջապէս նախորդող իրադրութիւնը Հայաստանում՝ ուժերի դասաւորութեան առումով, հայրենասիրական ճակատի մարտիկների անդրդուելի վճռականութիւնը Եղիշէն իր «աչքերով» է տեսել՝ Հայաստան աշխահի հերոսացման նկրտումներում. «Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին եւ զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, եւ ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, եւ ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիւտից: Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ եւ աշխարհս Հայոց»[3]:

Առաւել ակնյայտ պարզաբանումով՝ Եղիշէն խոստովանում է իր մասնակցութիւնը Պարսից Յազկերտ Բ. արքայից ար-

© National Library of Armenia

քայի արտաքին քաղաքականութիւնը ոչնչացնող քննադատութեան ենթարկելիս. «Բայց մեք թէպէտ եւ ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանս, եւ ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինիցի: Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, եւ ոչ դանդաղիմ: Ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասելով ոչ լռեցից: Ոչ ի կարծ ընդոստուցեալ, եւ ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ ի տեղւոջն պատահեցի եւ տեսի եւ լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով...»:[4]

Հէնց համաժողովրդական ազատագրական պատերազմի աւարտին, ուր ուժերի անհաւասարութեան պայմաններում հայ նախարարներից ու մարտիկներից շատերը ընկան Աւարայրի ճակատամարտում, նրանց գերեվարուած կանանց յիշատակելիս Եղիշէն հաստատում է նաեւ, որ նրանցից շուրջ հինգ հարիւրին անուանով-ազգանունով անձամբ ճանաչելիս է եղել. «Իսկ կանայք երանելի առաքինեացն եւ կապելոցն եւ անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ: Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ո՛չ միայն որ աւագագոյնքն էին, ա՛յլ զբազումս ի կրսերագունաց անտի»[5]*:*

Իսկ իր մասնակցութիւնը իբրեւ զինուոր՝ եղել է հէնց սկզբից եւեթ: Ընդ միջարկմամբ դիմելով իր պատուիրատու մեկենասին, Եղիշէն հայ բանակայինների անմխիթար վիճակը նկարագրում է սրտառուչ տողերով. «Թէպէտ եւ ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն, որ անցք անցին անդէն ի կարաւանին ընդ գունդ Հայոց, սակայն եւ ոչ լռել կամիցիմք՝ ծածկելով զվիշտս նեղութեանն այլ ասասցուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ, որք դառնապէս զմեզ ողբային. զի եւ դու լուիցես՝ ոչ սակաւ արտասուս հեղուցուս ի վերայ ազգիս թշուառութեան»[6]*:*

Հնագոյն Ճառընտիրներում այնուհետեւ հաղորդւում է, որ Եղիշէն Հայոց Վարդանանց պատերազմից յետոյ «թողեալ զզինուորութիւնն կրօնաւորեցաւ, եւ բնակէր ճգնութեամբ եւ խստակրօն վարուք յանապատկի պահոց եւ աղօթից պարապեալ, խորտաբուծ եւ գետնախշտի լեալ յաշխարհին Մոկաց եւ ի ծովեզերն»[7]*: Հէնց այս ժամանակ էլ իր երբեմնի ուսումնակից Մամիկոնեան Երէց Դաւթից յանձնարարական է սաանում ձեռնամուխ լինելու առանձին մատենագրական Յուշարձանում «Եւ անդ գրեաց զպատմութիւն սրբոց Վարդանանց եւ գիրս կանոնականս, եւ զմեկնութիւն խաչելութեանն Քրիստոսի եւ այլ զգիրս օգտակարսն»*[8]*:*

Այնուհետեւ ծերութեան վերջին տարիները անց է կացրել Ռշտունիք գաւառում, ուր եւ մահկանացուն կնքում է շուրջ 473-475 թուականներին: Հայ դպրութեան այս մեծ երախտաւորի շիրմաքարը մինչեւ այժմ էլ մատնացոյց են անում եւ երկիւղածութեամբ այցելութիւններ կատարում իբրեւ սրբավայրի:

Պատուիրատու մեկենաս՝ Մամիկոնեան Դաւիթ Երէց:-Նրա մասին որոշ կենսագրական տուեալներ, թէեւ չափազանց ժլատ, հաղորդում է Եղիշէն մատենագրական սոյն Յուշարձանում՝ հէնց Ընծայականում եւ յընթացս շարադրանքի: Պարզւում է՝ իր գրքի երախտաւոր մեկենասը եղել է մի շատ զարգացած գիտուն անձնաւորութիւն-Մամիկոնեան Դաւիթ Երէց անունով, որի մասին ակնածանքով է արտայայտւում Եղիշէն. զարմացած է, որ Հայոց պատերազմի մասին հերոսապատումը պատմագրելու յանձնարարականը իրեն՝ Եղիշէին է տալիս, ա՛յն դէպքում,

երբ գիտութեամբ առաւել հզօր լինելով անձամբ ինքը նոյնիսկ աւելի լաւ մատենագրել կարող է. «Այլ դու, ո՛վ մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեւք հրամայեսցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն (իմա՝ «երբ դու լաւագոյնները գրելու ինքդ հրամաններ ընդունել կարող էիր»- Լ. Խ.) Որպէս երեւի ինձ եւ քեզ եւ այնոցիկ, որ դեգերեցին յիմաստասիրութեան, երկնաւոր սիրոյ է նշանակս այս եւ ո՛չ երկրաւոր փառասիրութեան»[9]*: Ակնարկը թափանցիկ է՝ ուսման եւ գիտութեան համար միասնաբար գործուղման մէջ են եղել հեռագնաց ճանապարհորդութեամբ, ինչպէս առաւել մանրամասն այդ մասին հաղորդում է Պատմահայր Խորենացին:*

Ակնածութեամբ Եղիշէն ակնարկում է դարձեալ իր Ընծայականում մեկենասի «երկրաւոր առատ գիտութեան» մասին, երբ աւարտելով յանձնարարականը, շնորհապարատ զգացումով նաեւ յիշեցնում է. «Զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, եւ զյետս կացելոցն զվատթարութիւն ո՛չ յանձին կարօտութիւն երկրաւոր առատ գիտութեան լրման, ա՛յլ՝ այցելութիւն երկնաւոր տնտեսութեան, որ մատակարարէ յառաջգիտութեամբ զհատուցմունս երկոցունց կողմանցն, որ երեւելեօքն զաներոյթն գուշակէ»[10]*:*

«Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» մատենագրական երկի բնագրային կառոյցը:- Պատուիրատու մեկենասին հասցէագրուած Ընծայականով բացւում է մատեանը, որ նաեւ շուրջ 3-4 էջանոց «Յառաջաբան»-ի փոխարէն է նախատեսուած միաժամանակ: Վերնագիրն է՝ «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին Դաւթի Երիցու Մամիկոնի հայցեալ»: Սոյն Ընծայականում Եղիշէն իր համաձայնութիւնն է յայտնում ստանձնելու պատուիրատու մեկենասի առաջադրանքը հայ ժողովրդի ազգային ազատագրական պատերազմի պատմութիւնը մատենագրելու, որին անձամբ իր գործօն մասնակցութիւնն է բերել սկզբից մինչեւ նրա աւարտը, որ պատմական դէպքերի ու իրադարձութիւնների նախապատմութեան ընդգրկմամբ եւ ռազմական-քաղաքական-կրօնական-տնտեսական պատճառների մեկնաբանմամբ՝ ուրուագծում է շուրջ 36 տարիների պատմաշրջանը (428-465 թթ.):

Ի դէպ՝ Եղիշէն ամենուին Վարդան Սպարապետին չի վերագրել իր մատենագրական երկը, որքան էլ բարձր է գնահատել նրա հայրենասիրութիւնը, ռազմական հանճարեղ մարտավարութիւնը եւ գլխաւոր հրամանատարի վճռական դերը համաժողովրդական ապստամբութիւնը կազմակերպելիս, որոշակի՛ դիտումով. նա պարզապէս խորագրել է իր աշխատութիւն «Վասն Հայոց պատերազմի» վերտառութեամբ՝ բնութագրելու համար տեղի ունեցած դիւցազնապատումի բուն նշանակութիւնը, երբ Ընծայականում էլ նշում է այդ մասին. «Զբանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ո՛վ քաջ, վասն Հայո՛ց պատերազմին հրամայացեր...»[11]*: Պարզւում է՝ պատուիրատու մեկենասի էլ յանձնարարականը ա՛յդ է եղել, հետեւաբար քննական բանասիրութիւնը ճիշդ է նկատել, որ վերնագրի սկզբից աւելացուած «Վասն Վարդանայ եւ» ընթերցման ընդմիջարկումը հետագայում կատարուած լրացում է...: Մեծարման առհաւատչեան է նաեւ այն, որ Հայ Եկեղեցին «Քաջն Վարդանին» սրբերի շարքում դասեց եւ համազգային տօնական օր հռչակեց Աւարայրի ճակատամարտի հերոսացումը իբրեւ «Վարդանանց տօն»...:*

Հարկ է արձանագրել նաեւ.

Հեղինակը ինքն էլ բացայայտում է պատմագրական իր աշխատասիրութեան կառոյցը այնպիսի ճշգրտութեամբ, որ

© National Library of Armenia

լրացուցիչ բացատրութիւնների կարիք չի զգացուում ամենեւին: Այն ներկայացրել է, բացի Ընծայականից, եօթ առանձին գլուխներում՝ պատմաբանի հմտութեամբ.

«Ահա նշանագրեցի յայսմ եւթն յեղանակիս:

Առաջին՝ զԺամանակն:

Երկրորդ՝ զԻրացն պատահումն յիշխանէն արեւելից:

Երրորդ՝ զՄիաբանութիւն ուխտին եկեղեցւոյ:

Չորրորդ՝ զԵրկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ:

Հինգերորդ՝ զՅարձակումն արեւելեայց:

Վեցերորդ՝ զԸնդդիմանալն Հայոց պատերազմաւ:

Եօթներորդ՝ զՅերկարումն իրաց խռովութեան»[12]:

Այս կառոյցն է տուել պատմագրական իր երկին հեղինակը՝ շարադրանքի հետեւեալ նկատառումներով. «Յայսմ յեւթն գլուխս կարգագրեալ եւ եղեալ ծայրալիր պատարմամբ (իմա՝ «մանրամասն ուսուցմամբ»- Լ.Խ.) զսկիզբն եւ զմիջոցն եւ զկատարումն»[13], ծաւալուած պատմական բուռն իրադարձութիւնների ընթացքը ներկայացնելով իր ամբողջութեան մէջ: Նրա փայփայած նպատակն է եղել՝ մշտական ընթերցանութեան պատմագրական յուշարձան երկնել մեկենասի (եւ հետագայ հայ սերունդների)հայրենասիրական մշտաբորբոք ոգորումներին յաղուրդ տուող իբրեւ սեղանի դիրք. «...զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, եւ զյետս կացելոցն զվատթարութիւն...»[14]: Աւելին. նման ծրագրով շարադրուած մատեանի հրատապ անհրաժեշտութիւնը ժամանակին զգացւում էր նաեւ այն պատճառով, որ ազգային ազատագրական հերոսական պայքարի դուրս եկած, բայց եւ ծանր զոհեր տուած Հայոց երկիրը ամենեւին չ՚ընկճուի վճարածի համար, որովհետեւ այն արդիւնաւորուած է եւ արդարացուած ոչ միայն ներկայով, այլեւ մանաւա՚նդ ապագայով՝ հայ ժողովրդի գոյամարտի հաստատակամ վճռականութեամբ ու կենսունակութեամբ: Դիւցազնավէպի իր բնոյթով այս մատեանը «Մխիթարութիւն» է տալու տուժածներին, «Յոյս» եւ «Հաւատք»՝ քաջերին, «Արհամարհանք» է ներշնչելու եւ մահուան նկատմամբ յաղթանակի լոյսը տեսնելու կարողականութիւն հայորդիներին. «...Յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց եւ յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութեան»[15]:

Եղիշէ պատմիչը իր երկը շարադրելիս մատենագրական ոչ մի այլ աղբիւր չի օգտագործել՝ ո՛չ մերազնեայ, ո՛չ էլ օտարազնեայ. հեղինակը ինքն է սկզբնաղբիւրը մատենագրական իր Յուշարձանի՝ ծաւալուող իրադարձութիւնների գործօն մասնակցութեամբ՝ ականատեսի եւ ականջալուրի իր հանգամանքով: Լինելով իր ժամանակի շատ զարգացած գիտուններից մէկը՝ Եղիշէն պատմիչի հմտութեամբ քաջագիտակ էր ինչպէս Հայաստանի իրադրութեանը, հայ-պարսկական ու հայ-բիւզանդական քաղաքական, դիւանագիտական ու ռազմական յարաբերութիւններին, այնպէս եւ «միջազգային» քաղաքական-դիւանագիտական-ռազմական տուեալ կացութեանը իր նպաստաւոր եւ աննպաստ անդրադարձներով Հայաստանի համար՝ պարսկա-հռոմէական ռազմական դաշինքներին եւ ուժերի յարաբերական հաւասարութեանն ու կայունացմանը՝ մի կողմից, միւս կողմից՝ անմիջապէս Հայաստանի հարեւան կովկասեան ժողովուրդների ռազմա-քաղաքական կացութեանը:

Ուսումնասիրած լինելով Սասանեան Պարսկաստանի դիւանագիտութեան պատմութիւնը հպատակեցուած քրիստոնեայ երկրների՝ մասնաւորապէս Հայաստանի վերաբերմամբ փոփոխութիւնների զարգացման տարբեր փուլերով, շրջադարձային բեկում է նկատում պատմիչը ներկայ հանգրուանում, երբ վերացուած էր Հայաստանում Արշակունեաց արքայատոհմի գահակալութիւն եւ Պարսից արքայից արքայ Յազկերտ երկրորդը բացարձակ գրոհի էր անցել համաձուլողական իր նկրտումներում, հպատակեցուած քրիստոնեայ ժողովուրդների համար սպառնալի իրավիճակ ստեղծելով՝ տագնապալի բոլոր հետեւանքներով: Այդ իսկ պատճառով այս մատենագրական Յուշարձանը, իբրեւ սկզբնաղբիւր, փաստառատ նիւթ է պարփակում իրանագիտութեան, բիւզանդագիտութեան եւ կովկասագիտութեան համար՝ հայագիտութեան հետ միասին: Հիմք ունէր անշուշտ գերմանացի հայագէտ Իոզէֆ՝ Մարկուարտը մատենագրական այս աղբիւրը գնահատելիս. «Միջնադարեան ո՞ր ժողովուրդը կը կարողանայ պարծենալ, թէ երբեւիցէ կարողացել է իր սեփական լեզուով, կամ թէկուզ միայն բախտաւոր լատիներէնով, հրապարակ հանել Վարդանի եւ իր ընկերների դիւցազնամարտի այնպիսի մի նկարագրութիւն, ինչպիսին է Եղիշէ վարդապետի նկարագրածը»[16]:

Պարսից մազդեզական-զրադաշտական կրօնի հիմնադրոյթների ու արարողակարգի վերաբերեալ աղբիւրագիտական նշանակութիւն ունի Եղիշէի մատենագրական սոյն Յուշարձանը, համաշխարհային կրօնների ուսումնասիրման տեսակէտից նաեւ յոյժ կարեւորութիւն՝ միջազգային կրօնա-դաւանաբանական պատմութեան գիտական շարադրման համար:

Մազդեզականութեան-զրադաշտականութեան տեսական քննադատութիւնը առաջադրելիս ակներեւ է դառնում Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի արծարծումների հետ զարմանալի համանմանութիւնը: Այս իրողութիւնից պիտի հետեւցնել, որ Եղիշէ պատմագիրը լիովին օգտուել է կոթողային այդ աշխատութիւնից, մասնաւորապէս նաեւ պարսից կրօնի տարրապաշտութիւնը իր ամբողջ խոցելիութեամբ ու մերժելիութեամբ ներկայացնելիս: Դա միանգամայն անխուսափելի էր, որովհետեւ երկու ներհակական գաղափարաբանութիւնների՝ քրիստոնէական ուսմունքի եւ մազդեզականութեան-զրադաշտականութեան ուժեղ ընդհարումն էր ցոյց տալու Եղիշէն իր երկում, նախ տեսական՝ աստուածաբանական մակարդակում, ապա եւ տարբեր աշխարհների զինական բախումներում, համաձուլողական նկրտումների եւ ազգային ինքնութեան ու անկախութեան ոգորումների ահեղ ընդդիմակայումներով:

Միջազգային դրութեան նպաստաւոր կացութիւնից ոգեւորուած Պարսից արքայից արքայ Յազկերտ Երկրորդը սրբազան պատերազմ յայտարարեց քրիստոնեայ հպատակ ժողովուրդների դէմ՝ մազդեզական-զրադաշտական կրօնը պարտադրելով նրանց, պարսկական քաղաքակրթութեան ոլորտում նրանց համաձուլելու որոշակի նպատակ հետապնդելով: Արքունի հրամանը հրահանգում էր «Մինչեւ ի նաւասարդէ ի նաւասարդ, ասէ, յամենայն տեղիս՝ որ իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցի՛ն եւ կնքեսցի՛ն դրունք սուրբ տաճարացն, գրով համարով ացցի՛ն նուիրեալ սպասքն յարքունիս, լռեսցե՛ն ձայնք սաղմոսացն եւ դադարեսցե՛ն ընթերցւածք անսուտ մարգարէիցն: Քահանայք մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս, եւ

© National Library of Armenia

հաւատացեալքն ի Քրիստոս՝ արք եւ կանայք, որ բնակեալ են յիւրաքանչիւր մենանոցս, փոխեսցե՛ն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց»[17]:

Խորհրդատու մոգերի յանձնարարականն է եղել արքայից արքային, իբրեւ պետական քաղաքականութիւն՝ «...ի մի օրէնս դարձուցանեմ զամենայն ազգս եւ ազինս, որ են ի տէրութեան քում. յայնժամ եւ աշխարհն Յունաց հնազանդեալ մտցէ ընդ օրինօք քովք»[18]: Վերջնական եւ հիմնական նպատակը՝ «բայց միայն զաղանդ քրիստոնէից բա՛րձ ի միջոյ»[19]:

Իսկ Յազկերտը անսալով նրանց, հրամայում է. «Ամենայն ազգք եւ լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ՝ դադարեսցե՛ն յիւրաքանչիւր մոլար օրինաց եւ միայնոյ եկեսցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մատուցանելով եւ աստուած անուանելով, եւ սպաս ունելով կրակի. եւ ի վերայ այսր ամենայնի եւ զմոգութեան օրէնս կատարելով, զի մի՛ ինչ ամենեին պակաս առնիցեն»[20]:

Ստիպողականութիւնը առաւել ուժգնացնելով ու բացարձականացնելով՝ համաձուլողական նկրտումները միանգամայն թափանցիկ է դարձնում Միհրնեսեհ Վզուրկը Հայոց Մեծերին հասցէագրած իր տխրահռչակ նամակում. «Այլ զո՛ր օրէնս տէրս ձեր ունի, զնո՛յն եւ դուք կալարուք»[21]:

Պատմիչը տեսական ընդհանրացմամբ հետեւցնում է ներհակ գաղափարաբանութիւնների եւ աշխարհայեացքների միջեւ ծաւալուող ընդհարումների բնոյթը՝ կանխորոշելով. «...Զի ո՛չ եթէ մարմնական համարէին (իմա՛ Հայոց հոգեւոր նուիրապետութեան առաջնորդները- Լ.Խ.) զկռիւն, ա՛յլ հոգեւոր առաքինութեան, ցանկային մահակից լինել քաջ նահատակացն»[22]:

Հասարակական եւ քաղաքակրթական հսկայական առաջընթաց էր արձանագրել հայ հասարակութիւնը շուրջ երկու հարիւրամեայ պաշտօնական որդեգրմամբ քրիստոնէութեան աշխարհայեացքի, որով ոչ միայն հարստացել էր հոգեւոր աշխարհով ու մտահորիզոնի ընդարձակմամբ, այլեւ հասարակական կեցութեամբ եւ քաղաքացիական ազնուացմամբ յեղաբեկիչ նուաճումներ ունեցել որոկական թռիչքներով, որ անհնարին էր դարձնում այլեւս դէպի հինը՝ արդէն իսկ անցած ուղին վերադարձը, որին ժամանակավրէպօրէն ամէն կերպ ձգտում էր յազկերտեան յետադիմական սնանկ քաղաքականութիւնը:

Քաղաքացիական յարաբերութիւնների մակարդակում պահանջւում էր.

ա. վերացում «սուրբ ամուսնութեան օրէնքի»՝ հայկական հասարակութիւնում, որ սրբազնագործել էր քրիստոնէական եկեղեցին՝ միակնութեան նուիրագործումով. «Կարճեսցին եւ արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն»[23],- յայտարարւում է Պարսից արքունական հրամանում:

բ. Բազմակնութիւնը օրէնք պէտք է հռչակուի Հայաստանում. «Այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս առբասցեն. զի աճեցեալ բազմասցին ազգք Հայոց»[24]: Սա մի այլասերուածութեան ու խենէշութեան պահանջ էր, որ Հայոց Առաքելական եկեղեցին շէմքից մերժել էր հայ ընտանիքի սրբութեան եւ ամրութեան նկատառումով՝ խստագոյն պատիժների սահմանումով իր Կանոնագրքերում, որը եւ հայ հասարակութեան արձանագրած քաղաքակրթական առաջընթացի ցայտուն ցուցանիշներից է, անկասկա՛ծ:

գ. Քաղաքացիական յարաբերութիւնների բարբարոսկան՝ անասնական մակարդակը յիշեցնող ստորագոյն եւ սրբապիղծ

հրամանն էր տրուել՝ Հայաստանում եւս խրախուսել խառնակեցութեան բոլոր զազրելիութիւնները, երբ «դստերք հարանց լինիցին, եւ քորք՝ եղբարց, մարք մի՛ ելցեն յորդւոց (իմա՛ «մայրերը չխորշեն իրենց որդիներից»- Լ. Խ.), այլ եւ թոռունք ելցեն յանկողինս հաւուց (իմա՛ «պապիկների անկողինը մտնեն նաեւ թոռները» - Լ. Խ.)...»[25]: Յազկերտական հրամանի այս տրամադրութիւնները եւս կը քայքայեն ոչ միայն քրիստոնէական հայ ընտանիքը իր սրբազնագոյն յարաբերութիւններով ծնողների եւ զաւակների, հարսերի ու թոռների միջեւ, հիմնովին ու անճանաչելիօրէն այլասերելով, այլեւ ազգային գենեֆոնդը ոչնչացնելով ձուլման սայթաքուն ուղին կը հարթեն: Հայոց ազգային եկեղեցին իր Կանոնագրքերում ու դաստիարակչական քարոզչութիւններում հայ ընտանիքը, իբրեւ հասարակական ինստիտուտ իր կարեւորագոյն հիմունքներով, ճշդել եւ սահմանագծել է ազգակցական յարաբերութիւնների ամբողջ սանդղակը բարձր քաղաքակրթութեան նորմերի ու պահանջների համաձայն, ազգային առողջ գենեֆոնդի ամրութեան եւ ազնուացման նկատառումներով: Թշնամին լաւ էր հասկացել՝ քայքայելով ու վերասերելով հայ ընտանիքը իր քրիստոնէական վսեմ նկարագրով, քայքայած եւ վերասերած կը լինէր նաեւ նրա ազգային գենեֆոնդը, ազգութիւնը առհասարակ:

Կեցութեան այս յեղաշրջումը իրականացնելու համար, արքունական հրամանագրով պահանջւում էր նաեւ. «Դարձեալ եւ կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգուցն: Ուստերք եւ դստերք ազատաց եւ շինականաց կրթեսցին ի հրահանգս նոցուն»[26]:

Բայց մոռացուել կամ անդիտացուել էր այն իրողութիւնը, որ Մաշտոցեան ամբողջ շարժումը իր հոգեւոր յեղափոխութեամբ այնքան խոր արմատներ էր թողել ազգային գիտակցութեան մէջ հայ ժողովրդի, որ այլեւս անշրջելի էր իր անսասանութեամբ, աշխարհաճանաչման եւ աշխարհաիմաստաւորման իր նոր դիտարկմամբ:

Հայագիր դպրութեան շնորհիւ նաեւ քրիստոնէական կրօնը իր ուսմունքով ազգայնացուել էր, դարձել Ինքնութեան վկայական, համաձուլման ու այլասերման անյաղթահարելի պատնէշ եւ անխորտակ պատուար:

Այդ իսկ պատճառով միանգամայն իրաւունք ունէին Հայոց Մեծերը Պարսից արքունիքին տուած իրենց խրոխտ եւ գաղափարականօրէն փաստաւորած ու հիմնաւորուած Պատասխան-Նամակում. «Ցայսմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, եւ ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ եւ են դառն հարուածք»[27]:

Միանգամընդմիշտ ընդգծելով քրիստոնէական հաւատքի եւ ազգութեան միաձուլումն ու միասնութիւնը անքակտելի սերտութեամբ՝ Հայոց Մեծերը հարցը փակուած են համարում՝ ուղղակի. «Այլ դու յետ այսր ամենայնի այլ զմեզ մի՛ հարցաներ. զի ո՛չ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրեւ զտղայս, ա՛յլ՝ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել եւ ի բաց ելանել, ո՛չ այժմ, եւ ո՛չ յապա, եւ ո՛չ յաւիտեանս, եւ ոչ յաւիտենից յաւիտեանս»[28]:

Հաւատքի եւ ազգութեան միաձուլման վկայութիւնն է տալիս նաեւ Այրարատեան Ծաղկոտն գաւառի Անգղ գիւղաքաղաքում ապստամբ հայ ժողովրդից ջարդ տեսած պարսիկ մոգպետը, երբ դառնացած եւ յուսաբեկ որոշել էր Յազկերտին զեկուցել. «...Զի եթէ աստուածքն ե-

© National Library of Armenia

կեացեն մեզ յօգնութիւն, չէ՛ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս զփորձ առի զմիաբանութեան ուխտին եկեղեցւոյ: Զի թէ էին զօրք աշխարհիս մոգք, ո՛չ ինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ եւ յեղբարս եւ յորդիս եւ յամենայն մերձաւորս իւրեանց, նաեւ ոչ յանձինս իւրեանց»[29]:

Քրիստոնէութեան ազգայնացումը պատկերաւոր համեմատութեամբ նոյնիսկ «նոյնացւում» է բնութեան պարգեւած մարդու մաշկի «գոյն»ի հետ, որ միասնական ամբողջութիւն կազմում նրա էութեան հետ: Ի տարբերութիւն Հայոց Արշակունեաց Տիրան թագաւորի ժամանակների Փաւստոս Բուզանդի բնութագրման քրիստոնէութեան ուսմունքի որդեգրման ու տարածման մասին Հայաստանում, որ պարզապէս «մարդկային մի մոլորութիւն» էր դիտւում իր գցած հիմքերի տկարութեամբ, նորաստեղծ հայագիր դպրութեան շնորհիւ ազգայնացուելով՝ հարազատացել էր, դարձել աշխարհայեացք եւ կեցութիւն, նոյնիսկ էութիւն դրսեւորող իրական մաշկի «գոյն»՝ Եղիշէի դիւցազնական օրերում: Իսկ Ցազկերտը դեռեւս կարծում էր թիւրիմացաբար, որ քրիստոնէութիւնը «լոկ հանդերձ» է փոխարինելի՝ ուզած ժամանակ դէն գցելու հնարաւորութեամբ. Հայոց Վարդան Սպարապետի արտասանած պատմական ճառում զօրագնդերի առաջ, հանդիսաւորապէս յայտարարւում էր. Ցազկերտը, «որ իբրեւ զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, թերեւս եւ ոչ այլ կարասցէ մինչեւ ի կատարած: Քանզի հիմունք սորա հաստատութեամբ եդեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ո՛չ ի վերայ երկրի, ա՛յլ՝ ի վեր յերկինս, ուր ոչ անձրեւք իջանեն եւ ոչ հողմք չնչեն եւ ոչ հեղեղս յարուցանեն: Եւ մեք թէպէտ եւ մարմնով յերկրի եմք, այլ հաւատով յերկինս եմք շինեալ, ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածք Քրիստոսի»[30]: Այդ է պատճառը, որ մաշտոցագիր հայագիր դպրութեան ազգովին զօդող ու միասնականացնող ոգին թեւածում էր «Հոգեւոր պատերազմ»ում՝ կոփելով հայորդի մարտիկներին խիզախութեամբ ու անվեհերութեամբ. պատահական չէ, որ Ցազկերտ Բ. արքան Հայոց Այրուձին երկրից հեռացնելիս հեռաւոր վայրեր, «բարձին եւս ընդ իւրեանս զաստուածային սուրբ կտակարանսն բազում պաշտօնէիւք եւ քահանայիւք»[31]:

Հայոց Սպարապետ Վարդան Մամիկոնեանը եւս իր մարտիկներին քաջալերելու եւ ռազմա-հայրենասիրական ոգին բարձրացնելու համար դիմում է Աստուածաշնչին, մասնաւորապէս «Մակաբայեցւոց քաջ նկարագիրը» բարձրաձայն ընթերցում իր զօրագնդերի առաջ. «...Զի ըստ պատերազմական կարգին՝ զքաջ արանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր (իմա՛ Վարդան Մամիկոնեանը - Լ. Խ.) առաջի նոցա. զի եւ ինքն իսկ տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ սուրբ կտակարանաց: Զոր եւ ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն Մակաբայեցւոց՝ ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն, եւ յորդառատ բանիւք զելս իրացն իմացուցանէր նոցա, ո՛րպէս մարտուցեալ կռուեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացւոց: Զի թէպէտ եւ ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեան եկաց մինչեւ ցայսօր ժամանակի, ո՛չ միայն յերկրի, այլ եւ անմոռաց յերկինս», նաեւ այլ բազմաթիւ հերոսական դրուագներ ներկայացրեց Աստուածաշնչից ընդդէմ հեթանոսական մեհեանների ու քրմերի[32]:

Նկատենք, որ հայ աւագանու եւ հրամանատարների Տիզբոնում կալանքի տակ գտնուած ժամանակ հայագիր

դպրութիւնը «Հոգեւոր սնունդ» էր հայթաթում եւ մեծապէս սփոփում, կոփում ընկճուած հոգիները. նոյնիսկ անգրագէտ մեծահասակները փորձում էին «սովորել» այդ անձուկ պայմաններում հայագիր դպրութեան այբուբենը եւ բազմակի ու յարատեւ ընթերցումներով իրենց ոգին ամրապնդել. «Իսկ յերանելեացն բազումք ի նոցանէ, որ մանկագոյնքն էին, ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, եւ եղեւ նոցա այն կերակուր հոգեւոր, որով զանձինս քաջալերէին եւ զընկերսն մխիթարէին:»[33]: Հայագիր դպրութեան հետ հաղորդակցման բարերար նշանակութիւնը ընդգծելիս, եղիշէն վերջինիս հոգեպարար ազդեցութիւնն է յուշում, որ նոյնիսկ ծերերին «երիտասարդացնո՛ւմ» է հոգիների իր լուսաւորմամբ. «Եւ այնպէս զմայլեցան ի միտս եւ յոգիս իւրեանց, զի եւ որ ծերագոյնքն էին ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան: Զի թէպէտ եւ դպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում սաղմոսս ի բերան առնուլ՝ հոգեւոր երգակից լինէին մատաղերամ մանկտւոյն»[34]:

Հաւատքի եւ ազգային ինքնութեան համարժէքութիւնը այնքան է ցայտուն եւ ակներեւ դարձել, որ հայորդիները մահն անգամ արհամարհում են յանուն այդ արժէքների պահպանման ու նուիրականացման: Պարսից մոգպետը, ի տես իր զօրքերի ջարդի, որ Անգղ աւանում բոցաշունչ Ղեւոնդ Երէցի գլխաւորութեամբ պատուհասուեց, ընկճուած յուսաբեկութեամբ բացականչում է. «Մարդք (իմա՛ այստեղ «հայերը»-Լ.Խ.), որ ոչ ի կապանաց զանգիտեն, եւ ոչ ի տանջանաց երկնչին, եւ ոչ ի ստացուածոց պատկառին եւ որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել»[35]: Այս տողերում տրուած է խտացուած կերպով հայ ժողովրդի Ազգային ինքնութեան այն նկարագիրը, որ կերտել է Հայոց Եկեղեցին քրիստոնէութեամբ....: Հայ հերոս ժողովրդի աննկուն կամքն ու դիմադրողականութիւնը փորձելով՝ մոգպետը հետեւցնում է նաեւ, որ նոյնիսկ աշխարհի բոլոր զօրքերն էլ մոգեր լինէին, դարձեալ չէին կարողանայ դաւանափոխ դարձնել նրան. «Զի թէ էին զօրք աշխարհիս մոգք, ոչ ինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ եւ յեղբարս եւ յորդիս եւ յամենայն մերձաւորս ինքեանց, նաեւ ոչ յանձինս իւրեանց»[36]:

Վարդանանց ապստամբութիւնը համաշխարհային պատմութեան մէջ իրօք Խղճի Ազատութեան համար մղուած փառահեղ պատերազմներից մէկն է, որ այնքան սրտառուչ քնարերգութեամբ յուշագրել եւ դրանով իսկ անմահացրել է հայ ժողովրդի էպոպեան: Հայաստան աշխարհը զինավառ ոտքի կանգնեց մէկ մարդու նման յանուն Խղճի Ազատութեան եւ Հայրենիքի. «Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, եւ առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեօղս եւ յագարակս եւ ի բազում ամուրս լեռնային գաւառացն: Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց եւ կանանց, շինականաց եւ ազատաց, զքահանայից եւ զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին եւ արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի»[37]:

Բոլորը աշխարհազօրայիններ էին:

Օրհասի պահին ազգային ճգնաժամի՝ հրաշքի նման համահարթուել ու անյայտացել էին դասակարգային տարբերութիւններն ու սրացումները, դարձել միակամ ու համերաշխ՝ «ճշմարտութեան միեւնոյն գօտիով ամրացրին իրենց մէջքերը թէ՛ տղամարդիկ եւ թէ՛ կանայք»: Բնագրային ընթերցմամբ. «Ոչ երեւէր այնուհետեւ առաւել տէր քան զծառայ, եւ ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ

© National Library of Armenia

վշտացեալ, եւ ոչ ոք քան զոք նուազեալ ի յարութենէ: Մի սիրտ յօժարութեամբ ամենեցուն արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն միաբանելոց ի Քրիստոս: Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան եւ զմի ազան զլրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի. միով գօտեաւ ճշմարտութեամբ պնդեցին զմէջս արք եւ կանայք»[38]:

Հայաստանը միաժամանակ քրիստոնէութեան միջնաբերդն է դիտուել ոչ միայն Պասից արքունիքի կողմից, այլեւ մանաւանդ կովկասեան ժողովուրդների՝ վրացիների, աղուանների, ասորիների դնահատմամբ: Քրիստոնեայ բազմազգ զինուորները պարսից բանակում դիմելով հայ զօրականներին՝ բացականչում էին. «Դո՛ւք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. յորժամ աստի վտանգ հասանէր, առ մեզ յանդորր ելանէաք...»[39]: Դարձեալ. «Դո՛ւք էիք մեր պարծանս առ թշնամիսն ճշմարտութեան...»[40]:

Պարսից մոգպետն էլ իր դառը խոստովանութիւններում շեշտում եւ ընդգծում է հայ ժողովրդի խիզախ եւ յանդուգն նկարագիրը՝ աստուածպաշտութեան իր զարմանալի նուիրուածութեամբ. «Եւ այնպէս աներկիւղ եւ համարձակք էին» (իմա՛ «հայք»-Լ.Խ.) յաշխարհին Պարսից, մինչեւ յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցիս շինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զթագաւորաբնակ արքունեօքն: Շինէին եւ վկայարանս իմն անուանեալս, եւ զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, եւ յամենայն տեղիս անապատս միայնանոցս շինէին»[41]:

Որքան բռնացումները խստացան, այնքան անյողդողդ դտնուեցին հայերը. «Դարձեալ թէպէտ փակեաց եւ կնքեաց զդրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, ոչքա զամենայն տուն եկեղեց արարին, եւ յամենայն տեղւոջ զիւրեանց օրէնսն կատարէին, եւ լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնսն հաշուէին»[42]:

Մանաւանդ՝ քրիստոնեայ Հայոց աշխարհի գոյութիւնն ինքնին բաւական էր, որ Պարսից արքունիքը մեղմ եւ զգոյշ քաղաքականութիւն վարի քրիստոնեայ միւս ազգերի նկատմամբ ցուցաբերած իր յարաբերութիւններում. «Ցայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն եւ ի մեզ փոքր ի շատէ խնայէին...»[43]:

Եղիշէ պատմագիրը հաւաստում է նաեւ, որ Խղճի Ազատութեան դէմ քրիստոնեայ երկրներին պատերազմ յայտարարած Ցազկերտ Բ. արքան առաւել դաժանութիւն եւ անողոքութիւն ցուցաբերեց մանաւանդ Հայոց աշխարհի նկատմամբ՝ նրա վայելած հեղինակութեան եւ բացառիկ ազդեցութեան պատճառով. «Այլ յայսմ տեղւոջ ոչ միայն ի վերայ միոյ ազգի ողբումն մեր, այլ ի վերայ ազգաց եւ աշխարհաց. զոր եւ յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ եւ ոչ խնդութեան մտօք»[44]: Ցազկերտը Հայաստանին ուժեղ թափով հարուածելով, իրականում՝ թուլացրած եղաւ նաեւ միւս քրիստոնեայ ժողովուրդների դիմադրողականութիւնը, որոնք Հայաստանի հզօրութեան պատճառով իրենք էլ մեղմ վերաբերմունքի էին արժանանում, իսկ ծայրայեղ իրավիճակներում յաճախ էին ապահով ապաստան գտնում Հայոց աշխարհում:

Նկատենք՝ Ցազկերտ Բ. արքան իր գերնպատակին հասնելու համար կրօնական պատերազմ յայտարարելուց առաջ քրիստոնեայ Հայաստանի եւ կովկասեան միւս ժողովուրդների դէմ, նախապէս մի շարք ռազմա-տնտեսական ու քաղաքական սեղմումների եւ բռնացումների դիմեց՝ փորձելով քանդել այդ երկրների ներկառոյցային հիմքերը:

Պատմաբանի խորաթափանց հայեաց-

քով Եղիշէն մատնացոյց է անում Հայաստանում բռնկուած ժողովրդական ապստամբութեան դրդապատճառները՝ կոմպլէքսային ներազդեցութիւններով. Պարսից արքունիքը նախ մարդահամար (իր բառով՝ «աշխարհագիր») անցկացրեց եւ համընդհանուր արքունական հարկի ենթակայ դարձրեց, չբացառելով մինչեւ անգամ եկեղեցին ու հոգեւորականներին. «Առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն: Երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ»[45]: Առաջին անգամ լինելով հայ-պարսկական յարաբերութիւնների պատմութեան մէջ Հայոց եկեղեցին հարկատու էր դարձւում օտար պետութեանը. «Բայց սակայն թէպէտ եւ ամենայն գործքս այս դժնեայ էին, չեւ էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ եւ ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ եւ էր ծանրութիւն հարկացն»[46]: Իրականում, նշում է Եղիշէն, պետականութեան վայել հարկապահանջութիւն չէր կատարուածը, այլ՝ կողոպո՛ւտ, թալա՛ն աւազակաբարոյ յափշտակութեամբ՝ մէկի դէմ տասը, հարիւր դահեկան շորթելով, ընդ որում՝ մինչեւ իսկ եպիսկոպոսներից ու երէցներից. «Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւ դահեկանաւ չափ, կրկին առնուին, նոյնպէս եւ եպիսկոպոսաց եւ երիցանց դնէին, ոչ միայն շինաց, այլեւ աւերակաց»[47]: Համընդհանուր հարկապահանջութեամբ զերծ չէին մնացել մինչեւ անգամ լեռները, դաշտերը եւ անտառները. «Նա եւ բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից լերանց եւ դաշտաց եւ մայրեաց: Ո՛չ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, ա՛յլ՝ հինաբար (իմա՛ «աւազակաբար»-Լ.Խ.) յափշտակելով...»[48]: Որքան էլ գայլի ընչաքաղցութեամբ վերցնում տանում էին պարսիկ հարկահաններ-ը Հայաստանից գանձերը, այնուամենայնիւ ապշած տեսնում էին, որ սպառում չկայ հարստութիւնների. «Մինչեւ ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի՞ այս ամենայն գանձ ելանէ՝ զիա՞րդ չէն կայցէ աշխարհն»[49]:

Հայաստանի իւրայատուկ կարգավիճակը իբրեւ մարդպանութիւն՝ Ցազկերտը փորձեց խարխլել. դեռեւս այն ժամանակներից, երբ Սասանեան արքունիքը Տիրան արքայից յետոյ զրկեց Հայաստանին թագաւորութիւնից, ինքնավարական իշխանութիւնը անցաւ նախարարներին, որով հարկերը Տիզբոն յանձնելուց յետոյ երկրի կառավարումը ամբողջովին իրենց էր պատկանում, ըստ որում պատերազմների ժամանակ Հոյոց նշանաւոր Այրուձին իրենք էին առաջնորդում բոլոր դէպքերում. «Եւ իբրեւ զնա (իմա՛ Տիրան Արշակունի Հայոց թագաւորին – Լ. Խ.) եւ մերժեաց (իմա՛ Ցազկերտը – Լ. Խ.) ի թագաւորութենէն, ի նախարասն Հայոց անկանէր թագաւորութիւնն,_ հաղորդում է Եղիշէն.– զի թէպէտ եւ գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[50]: Իսկ Ցազկերտը տեսնում էր, որ մարզպետական ինքնավարութիւնը ապահովում էր նաեւ քրիստոնէութեան ազատ բարգաւաճումը Հայաստանում, որը եւ սնում էր նաեւ ազատաբաղձ դաղափարներ, բոլորովին անկախ պարսկական հեթանոսական մշակոյթից եւ դաղափարախօսութիւնից: Վճռեց զրկել Հայաստանը, առաջին հերթին, նաեւ քաղաքական այդ հովանիից կարգավիճակի. զինական դիմադրողականութիւնից ուժաթափ եւ անզօր պահելու համար հայ ժողովրդին, Հեծելազօրը խաղաղ պայմաններում հեռացրեց երկրից հիւսիսային կողմերը քուշանների:

© National Library of Armenia

Ազգային Գոյամարտի եւ Վերապրումի օրհասական ճգնաժամ էր ստեղծուած. ժամանակի ահագնութիւնը իր դրամատիկական լարուածութեամբ միանգամայն ճիշդ էին պատկերացնում Հայոց առաջնորդները: Իսկ ամէն մի ճգնաժամից բարեյաջող դուրս գալու համար համապատասխան հոգեւոր մթնոլորտ պէտք է ստեղծել երկրում՝ ազգային կենսունակ ուժերի լարումով, ժողովուրդի յաղթանակի հաւատքի վճռականութեան կոփումով: Մարտավարութիւնը, Եղիշէի իսկ հաւաստմամբ, ժողովրդի բոլոր հատուածների համախմբումն ու միասնութիւնն էր, նրա ոգեկան բոլոր ուժերը զօրակոչի ենթարկելու հրամայականով: Ազգային գաղափարախօսութեան անկապտելի հարստութիւնը դարձրեց, երբ համաշխարհային պատմագրութիւնից վկայակոչելով Եղիշէն ջերմապէս յորդորեց ու պատգամեց հայորդի ապագայ սերունդներին՝ իր Ընծայականում աշակերտակից Դաւիթ Երէց մեկենասին խօսքն ուղղելով. «Այլ դու, ո՜վ մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեւք հրամայեսցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն: Որպէս երեւի ինձ եւ քեզ եւ այնոցիկ, որ դեգերեցին յիմաստասիրութեան, երկնաւոր սիրոյ է նշանակս այս եւ ոչ երկրաւոր փառասիրութեան. որպէս եւ ասացին իսկ ոմանք ի քաջ պատմագրացն. «Զուգութիւն (իմա՛ «Միաբանութիւն»ը – Լ. Խ.) է մայր բարեաց եւ անզուգութիւն (իմա՛ «Անմիաբանութիւն»ը Լ.Խ.) ծնոց չարեաց»[51]:

Դեռեւս բիբլիական ճշմարտութիւն է՝ «Ամենայն տուն եւ թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն»[52], որը եւ ազգային գաղափարախօսութիւնը հարստացնելու նպատակով է Եղիշէ պատմիչը վկայակոչել՝ Գոյամարտի եւ Վերապրումի շրջադարձային բոլոր ժամանակներում իբրեւ մեկնակէտ արհաւիրքների դիմագրաւման համար՝ հայ ժողովրդի պատգամային կարեւորմամբ:

Երկրորդ. համաժողովրդական ազատագրական պայքարի տեսաբան Եղիշէի ընդհանրացմամբ՝ պատմութեան հարուստ կենսափորձ ցոյց է տուել. ա՛յն ժողովուրդն է յաղթանակում ու յարատեւում, ով չի հաշտւում երբեւ պարտութեան զգացողութեան հետ՝ որքան էլ տարապայման լինի իրադրութիւնը իր համար: Իսկ ժողովրդին կարելի է ընկճել, եթէ հոգեպէս՝ հաւատքով զինաթափ է արւում, որից յետոյ իսկոյնեւեթ կազմալուծւում եւ յանձնւում է: Այդ իրողութիւնը խորապէս ըմբռնել են ոչ միայն Հայոց առաջնորդները Վարդանանց պատերազմի, այլեւ, ամէնից առաջ, Պարսի՛ց արքունիքը:

Ինչպէս անհատի, այնպէս եւ ազգի հոգեկանի եւ մարմնականի փոխյարաբերութիւնն այնպիսին է, որ առաջնայինը հոգին է իր հաւատքով ու դաւանանքով, որ «կենդանութիւն» է պարգեւում մարմնին մշտապէս՝ բարձր մակարդակում պահելով նրա կենսագործունէութիւնը. «Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն»:[53]

Իսկ հոգեկանը իբրեւ հաւատք եւ դաւանանք՝ անաղարտ պէտք է լինի եւ ամբողջական. ա՛յդ դէպքում է միայն՝ խիզախութիւնն ու քաջութիւնը ապահովուած կը լինի, ա՛յդ նշանաբանով պատերազմի բովով անցան եւ հերոսացան Վարդանանց ուխտի աշխարհազօրայինները: Պատահական չէ ամենեւին, որ Հայոց Սպարապետը իր բոցաշունչ ճառում խորիմաստ արտայայտութիւնն է ունենում՝ «վախի աղբիւրը թերահաւատութիւն»ն է գործի ճշմարտացիութեան նկատմամբ, հաւատքի պակասը. «Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնք մերժեցաք, ընդ նմին եւ երկիւղն փախիցէ ի մտաց եւ ի խորհրդոց մերոց»[54]: Ընդհանրացնելով տեսական

քննութեամբ հաւատքի (որ նոյնն է թէ համոզմունք) եւ մարմնի դիմադրողականութեան փոխյարաբերութիւնը, Եղիշէն հոգեբանական ուշագրաւ հետեւութիւն է բխեցնում Գոյապայքարի. «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ ի բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, եւ յամենայն բանէ խոովի, եւ յամենայն իրաց դողայ. Երազա՞ւէ՛տ է այնպիսին ի կեանս իւրում, եւ յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում»[55]: Հոգու եւ մարմնի, հաւատքի եւ գործի փոխյարաբերութեան՝ Ազգային գաղափարախօսութեան համար խիստ արժէքաւոր այս հիմնադրոյթով եւս հարստացրեց պատմիչ Եղիշէն:

Բայց այս երկուսի էլ՝ մարմնի եւ հոգու «կառավարիչ»ն է՝ բանականութիւնը, որ ղեկավարում է մարմինն ու հոգին միանգամայն, ընդ որում դա այդպէս է ո՛չ միայն անհատի, ա՛յլեւ «աշխարհի» ժողովուրդների նկատմամբ. «...Իսկ մարմնոյ եւ հոգւոյ միտք են կառավար. եւ որպէս առ մի մարդ՝ այնպէս ոռ բոլոր աշխարհս»[56]: Աֆորիզմի խտութեամբ Եղիշէն ճշմարտում է նաեւ. «Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, եւ մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս եւ տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ եւ յոր մեծն է քան զամենայն: Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ո՛չ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ: Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՞րչափ եւս առաւել առ հոգեւորն»[57]:

Բայց ոչ թէ ամէն մի անզարգացած՝ խաւարամիտ ու տգէտ բանականութիւնը նկատի ունի իր տեսական հարցադրմամբ Եղիշէն, այլ բացառապէս դպրութե՛ամբ զարգացած բանականութիւն, որ իրական արժէք է ներկայացնում իր կարեւորմամբ: Իրականում՝ բոլոր չարիքների աղբիւրը «Անուսումնութիւն»ն է՝ խաւարամտութիւն, յայտարարում է նա, հետեւաբար եւ բոլոր բարիքների աղբիւրը՝ դարձեա՛լ դպրութիւն, գիտութիւնը, զարգացած առողջ բանականութիւնն է: Այդ ամբողջութեամբ վերաբերում է, տեսաբանում է Եղիշէն, առաջին հերթին ազգային եւ համաշխարհային աղէտներին ու պատուհասներին, որպիսիք էին, ներկայ դէպքում, Պարսից արքայից արքայ Յազկերտի խօլարաշաւ գրոհները՝ հպատակ քրիստոնեայ ազգերին ճուլելու եւ ոչնչացնելու իր նկրտումներում: «Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ»[58]: Աւելին՝ համաժողովրդական ազատագրական պայքարի հայ տեսաբանի տարողունակ ընդհանրացմամբ՝ ուսումը, դպրութիւնն առհասարակ, «կատարեալ կեանք» է անհատի թէ ազգութեան համար՝ ճիշդ այնպէս, ինչպէս արեւի ճառագայթը, որից, տարաբախտաբար, զրկուած է կոյրը առյաւէտ. «Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց»:[59] Ահա թէ ինչպիսի բարձր գնահատական է տրւում մաշտոցագիր հայոց դպրութեան դերին ու մասնակցութեանը Ազգային Ինքնութեան համար մղուած կենաց-մահու ազատագրական համաժողովրդական Գոյամարտում՝ 451 թուականին: Վկայակոչելով Հին Աշխարհի իմաստուններից մէկի բնաբանը, որ իբրեւ թեւաւոր խօսք նաեւ ազգային գաղափարախօսութեան սեփականութիւնն է դարձնում Եղիշէն, իր հերթին պատգամելով հայորդի սերունդներն. «Որպէս եւ ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մա՛հ է, մահ իմացեալ՝ անմահութի՛ւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ո՛չ երկնչի ի նմանէ»[60]: Թեկուզեւ այս տեսաբանական մի հատիկ աֆորիզմով՝ սպառիչ լոյս է սփռւում հայ ժողովրդի դիւցազնապա-

© National Library of Armenia

տումի՝ հոգեւոր ազատագրութեան ու ֆիզիքական անկախութեան համար մղած պատերազմի բնոյթի եւ շարժառիթների միանգամայն ճիշդ իմաստաւորման առումով:

Այդ իսկ պատճառով՝ «Հոգեւոր պատերազմ» յայտարարուեց ամբողջ երկրով մէկ Հայաստան աշխարհում՝ ընդդէմ պարսից մազդեզական-զրադաշտական կրօնի ոտնձգութիւնների ու Պարսից զօրաբանակների բացայայտ գրոհումներին:

Ամբողջ նորաստեղծ հայագիր դպրութեան մաշտոցեան սերունդը ընդգրկուեց սրբազան «Հոգեւոր պատերազմ»ում. Աւարայրի ճակատամարտում իրենց ֆիզիքական մասնակցութիւնը բերեցին կաթողիկոսական տեղապահ Յովսէփ Վայոցձորեցին, Եղիշէն, Ղեւոնդ Երէցը «եւ բազում սուրբք», իրենք էլ բնութագրեցին այն իբրեւ սրբազան «Հոգեւոր պատերազմ». «Քանզի ոչ ինչ զանգիտեցին եւ նոքա գալ ընդ նոսին ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ՝ հոգեւոր առաքինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահատակացն»[61]: Յատկապէս Ղեւոնդ Երէցը Հայոց զօրականների առաջ ելոյթ ունենալիս, բացայայտում է ընդունուած կարգը, որ մինչ համաժողովրդական ազատագրական Հայոց պատերազմը գործում էր բանակում. Հայոց զօրականները ճակատամարտի գնալուց առաջ ընդունում էին հոգեւորականների աղօթքներն ու օրհնութիւնները, բայց վերջիններս պատերազմներին չէին մասնակցում ֆիզիքապէս «Գիտէք դուք ամենեքեան, յառաջ ժամանակաւ հասեալ ձեր ի գործ պատերազմի, թէպէտ եւ էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապարզորդել ի մէջ բանակիս, ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիւք՝ յամուր տեղւոջ թողուիք զնոսա...»[62]: Բայց այս անգամ դրութիւնը բոլորովին ա՛յլ էր. «Հոգեւոր պատերազմին» իրենց նաեւ ֆիզիքական մասնակցութիւնը բերեցին հայ հոգեւորականները ամբողջ դասով՝ «վառեալք զինու եւ պատրաստեալք ի պատերազմ»: Այսպէս, Հայոց համաժողովրդական ազատագրական պայքարի դիւցազնավէպում կարդում ենք բոցաշունչ Ղեւոնդ Երէցի ճառի շարունակութեանը. «Իսկ այսօր եպիսկոպոսք եւ երիցունք եւ սարկաւագունք, սաղմոսերգողք եւ գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբր վառեալք զինու եւ պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմարտութեան: Եւ եթէ մեռանել եւս հասանէ ի նոցանէ, սակայն եւ յայնմանէ ո՛չ են զանգիտելոց. քանզի լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն»[63]: Այս սրբազան «Հոգեւոր պատերազմ»ում մասնակցողները երկու դէպքում էլ հերոսանում են. «Մեր յոյսն մեզ կրկին երեւի. եթէ մեռանիմք՝ կեամք. եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան»[64]:

Եղիշէ պատմիչը կալանքում գտնուող ամուսիններին համբերատարութեամբ սպասող նախարարների փափկասուն կանանց եւս իրաւամբ մասնակից է համարում հայ ժողովրդի մղած «Հոգեւոր պատերազմ»ին. «Մոռացան զկանացի տկարութիւն, եւ եղեն արուք առաքինիք ի հոգեւոր պատերազմին»[65]:

Հայոց Վարդան Սպարապետը նոյնպէս այն համոզմունքին է, որ իր առաջնորդութեամբ մղուած Աւարայրի ճակատամարտը եւ առհասարակ Պարսից տիրապետութեան դէմ ծաւալուած ազգային համաժողովրդական ազատագրական պատերազմը «Հոգեւոր պատերազմ» է՝ նոյնիսկ «Հոգեւոր բարձրագոյն հրամանատարութեան (իմա՛ Աստուծոյ – Լ. Խ.) անունով». Նա իր նշանաւոր ճառում հէնց Աւարայրի ճակատամարտից առաջ արտասանած, մինչեւ իսկ յայտարարում է. «...Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, եւ ձեր ընդ իս. է՛ ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է՛ ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է՝ որ յաղթող եմք եւ ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք: ...Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, ո՛րչափ եւս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց եւ մեռելոց[66]: Խորը ըմբռնելով ծաւալուող իրադարձութիւնների կարեւորութիւնը եւ մինչեւ անգամ բախտորոշ նշանակութիւնը հայ ժողովրդի Գոյամարտի եւ Վերապրումի համար, Հայոց հոգեւոր նուիրապետութեան բարձրագոյն ներկայացուցիչները Բիւզանդիայի թէոդոր կայսերը զինական օգնութեան հայցով դիմելիս, հետեւեալ կարգախօսային ձեւակերպմամբ է իմաստաւորել պատմական տուեալ պահը՝ հայ ժողովրդի զինուած պայքարը Պարսից տիրապետութեան դէմ. «Ընտրեցաք զմահ աստուածպաշտութեամբ, քան զկեանս ուրացութեամբ»[67]: Յիշեցնելով նաեւ Հայաստանի ռազմա-ստրատեգիական նշանակութիւնը քրիստոնեայ աշխարհի համար, նամակագիրները զգուշացնում են բիւզանդական կայսերը. «Եւ եթէ սակաւիկ մի հեղգայք, գուցէ բազում եւ այլոց աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա»[68]:

Խղճի Ազատութեան համար մղուող մեծ պատերազմում, իրադարձութիւններին դրծօն մասնակից, ականատես եւ անկնջալուր պատմիչ Եղիշէն ազգային գաղափարախօսութեան հիմնադրոյթներից մեկնելո՛վ է իմաստաւորում ծաւալուող պատմական եղելութիւններն ու դէպքերը, եւ ո՛չ թէ սոսկ նեղմիտ կրօնամոլութեան կուրութիւնից առաջնորդուելով, ինչպէս հայագէտներից ոմանք գտնում են:

Եղիշէն միանգամայն քաջածանօթ է, այն էլ ըստ էութեան, ինչպէս եւ պայքարում ընդգրկուած հայ հոգեւոր նուիրապետութեան բոլոր բարձրագոյն ներկայացուցիչները, կրօնների ու դաւանանքների տեսական հարցադրումներին ու մեկնաբանումներին, այդ իսկ պատճառով յայտարարում են. մի անգամ որ աստուածաբանական «բարձրագոյն ճշմարտութեան» է հասել մի ժողովուրդ, անհնար է նրան ետ պահել ու վերադարձնել իր նախկին մոլորութիւններին, երբ արդէն վաղուց յաղթահարել է դրանք. «Ինը տարի վեց ամիս» Տիզբոնում կամաւոր կալանաւորուած հայորդիները ահա այսպէս են պատասխանում դաւանափոխ լինելու համար պարսիկ հազարապետի գործադրած զինական ու քարոզչական ապարդիւն ճիգերին. «Որք միանգամ աշակերտեալ են ճշմարտութեանն, ո՛չ երբէք փոխիմ ի նմանէ. այլ որ են նո՛ւյնն կան»[69]: Ուշագրաւ է նաեւ Ղեւոնդ Երէցի երկխօսութիւնը, թարգմանչի միջոցով, Յազկերտի լիազօր ներկայացուցիչ Դենշապուհի հետ, երկու հակամարտ կրօնները միմեանց հետ համեմատելիս, երբ հեգնաբար հարց է տալիս. «Բայց ասեմ քեզ՝ որում սակաւիկ մի տեղեկագոյն ես: Ո՞վ ի քաջ զօրականէն զկնի մտանիցէ ի պատերազմ. եւ եթէ զայս արասցէ, ոչ քաջ անուանի նա, այլ յոյժ վատ: Եւ կամ ո՞ յիմաստուն վաճառականաց զպատուական մարգարիտն (իմա՛ փոխաբերաբար նկատի ունի «քրիստոնէական կրօն»ը) փոխանակիցէ ընդ անարգ թրուշայի (իմա՛ «ուլունք»ի, փոխաբերաբար՝ մազդեզական-զրադաշտական կրօնի հետ – Լ. Խ.), բայց եթէ յիմարեալ իցէ տգիտութեամբ, որպէս եւ ձեր մոլորութեան առաջնորդք»[70]: Ընդ որում նման համեմատութիւններն արւում են

© National Library of Armenia

Եղիշէի պատմագրական երկում ոչ միայն իբրեւ էժանագին նուաստացուցիչ յայտարարութիւններ, այլ աստուածաբանական ու կրօնագիտական միանգամայն լուրջ հիմնաւորումներով ու ծանրակշիռ փաստարկներով...:

Դիցուք՝ Հայոց հոգեւոր նուիրապետութեան ներկայացուցիչները իրենց Պատասխան-նամակում ամենայն մանրակրկիտութեամբ ու հանգամանօրէն քննել եւ հերքել են մազդեզական-զրադաշտական կրօնի բոլոր հիմնադրոյթները կռապաշտական իրենց նախապաշարումներով ու տարրապաշտութեամբ, ցոյց են տուել հզօր բանականութեան լուսարձակով նրանց նուաստութիւնն ու անյարիրութիւնները՝ մի կողմից՝ ապացուցել քրիստոնէական աստուածաբանութեան անվիճելի գերադասութիւնը աշխարհընկալման ու մեկնաբանման իր վեհութեամբ՝ համամարդկայնութեամբ ու ազնուացմամբ, կեցութեան ցածր մակարդակին համապատասխանող կրակապաշտութեան համեմատութեամբ:

Համաժողովրդական ազգային Ազատագրական Պայքարի՝ «Հոգեւոր պատերազմի» առճակատումը նկարագրելիս, մասնակից եւ ականատես պատմիչը հետեւեալ կերպ է բնութագրում. «Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, եւ կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատենցան»[71]: Ճիշդ է՝ ուժային յարաբերութեամբ, պարսկական զօրքերը գերազանցում էին ե՛ւ մարդահամարով, ե՛ւ զինական սպառազինութեամբ: Բայց զաւթիչ բանակի դէմ «Հոգեւոր պատերազմ» յայտարարած Հայոց աշխարհազօրը իր հերոսականութեամբ ոչ միայն բարոյական յաղթանակ տարաւ, այլեւ ստիպեց թշնամուն կասեցնել իր յարձակումները եւ նահանջի ճանապարհը ցոյց տալ: Ապացուցեց, որ գործի արդարացիութեան համար մարտնչող Ընդդիմութիւնը իր անդրդուելիութեամբ ու կորովով ի վերջոյ կը յաղթանակի բռնացողին:

Եւ իրօք, Պարսից Յազկերտ արքայից արքան հարկադրաբար փոխեց իր յարձակողական քաղաքականութիւնը ոչ միայն Հայաստանի, այլեւ քրիստոնեայ միւս երկրների նկատմամբ, որոնք իր հպատակութեան տակ էին գտնուում. «Եւ որ մեծաձայն բարբառով որոտայր, եւ եւս ահագին հրամանօք զհեռաւորս եւ զմերձաւորս դողացուցանէր, սկսաւ քաղցր եւ աղերս բանիւք խօսել ընդ ամենեսեան եւ ասել. «Զի՞նչ ինչ վնաս գործեալ է իմ, եւ զո՞ր յանցանս յանցուցեալ կամ առ ազգս կամ առ լեզուս կամ առ անձն իւրաքանչիւր: Ո՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս Արեաց, եւ իւրաքանչիւր պաշտամունք յայտնի են. ո՞ երբէք նեղեաց, պնդեաց դարձուցանել ի մի օրէնս մոգութեան. մանաւա՛նդ վասն օրինաց քրիստոնէութեանն...»[72]: Ընկրկումը եւ քաղաքական շրջադարձը 180 աստիճանով էր. «...Եւ զհատեալ ոճիկսն կարգէր անդրէն իւրաքանչիւր, եւ զարգելեալ բազմականսն ի նոցանէ՝ ի տեղի հրամայէր մատուցանել, եւ հանապարզորդ յարքունիս մտանել ոչ արգելոյր զնոսա. եւ զամենայն որ զիարդ եւ կարգեալ էին յառաջագոյն՝ անդրէն յօրինէր: Խոնարհէր եւ խօսէր ընդ նոսա սիրով ըստ առաջին սովորութեանն»[73]: Աւելին՝ «եթէ ի կապանս ոք կայցէ, արքունի հրամանաւ արձակեալ լիցի. եւ եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրէն: Սոյնպէս եւ երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարգեւականք եւ եթէ քսակագինք, եւ հանեալ ուրուք իցէ, հրամայեցաք զի դարձցին»[74]: Եւ վերջապէս՝ «Ոչ ինչ յիշեցից ամենեւին զքէն վրիժուցն խնդրելոյ: Որպէս ունէիք յառաջ ճշմարտութեամբ զօրէնս ձեր, այսուհետեւ առաւել կալարուք. բայց միայն ի ծառայութենէ մերմէ ոչ ելանէք»[75]: Հայագիր դպրութեան առաջին ներկայացուցիչներից այս պատմիչը՝ Յաղթանակի արուեստի տեսաբան Եղիշէն իր անմահ մատենագրական Յիշատակարանով հայորդի սերունդներին. փաստօրէն գաղափարական Ուսուցիչը հանդիսացաւ ամբողջ Միջնադարում եւ հետագայում շնորհիւ այն բանի, որ Ազգային Գաղափարախօսութեան պատգամները պահպանեցին իրենց վիթխարի ուժականութիւնը՝ բոլո՛ր ժամանակների համար: Հեղինակը անձամբ գիտակցել է իր երկի աւետարանական նշանակութիւնը, երբ իր Ընծայականում յանձնարարել է. «Յայսմ յեւթն գլուխս կարգագրեալ եւ եղեալ ծայրալիր պատարմամբ (իմա՛ «մանրակրկիտ շարադրեց» – Լ. Խ.) զսկիզբն եւ զմիջոցն եւ զկատարումն, զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, եւ զյետս կացելոցն զվատթարութիւն...»[76]:

Եւ իրո՛ք, առինքնող եւ գեղարուեստական բարձր ոճով է գրուած պատմագրական սոյն երկը, դրամատիզացուած կերպարներով եւ պատկերաւոր մտածողութեամբ ու փոխաբերութիւններով, ինչպէս եւ թեւաւոր խօսքերով ու իմաստալի ասոյթներով համեմուած, ճարտասանական հնարներով ու արտայայտչաձեւերով յատկանշուած, որ երաշխաւորում են անձանձիր ընթերցումներն ու խորհրդածութիւնները, որպէս վաւերական ազգային դիւցազներգութիւն:

Իբրեւ հետաքրքիր եւ ուշագրաւ գրական երեւոյթներից մէկը՝ նաեւ բովանդակային բազում առումներով, որ աղերսւում է իրանագիտութեանը, կովկասագիտութեանը, բիւզանդագիտութեանը հաւասարապէս, Եղիշէի մատենագրական սոյն Յուշարձանը թարգմանուել է նաեւ (երբեմն՝ բազմակի) եւրոպական լեզուներով՝ ֆրանսերէնի, իտալերէնի, գերմաներէնի, անգլերէնի, ռուսերէնի եւ այլն:

Եղիշէի գրչին են պատկանում նաեւ «Վասն արարածոց», ինչպէս եւ Յեսուայ եւ Դատաւորաց Մեկնութիւնները, մի քանի Ճառեր (առ Միանձունս եւ այլ խնդիրների շուրջ) եւ այլն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Քաղուածքը ըստ Գար. Զարպհանալեանի. տե՛ս «*Պատմութիւն հայ հին դպրութեան (ԴԺԳդար)*, Բարձրագոյն դպրոցաց համար, Վենետիկ, 1932, էջ 334»:
2 Եղիշէ, *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, թարգմանութիւն եւ ծանօթագրութիւնները Ե. Տեր-Մինասեանի, Երեւան, 1989, էջ 10:
3 Անդ, էջ 198-200:
4 Անդ, էջ 30:
5 Անդ, էջ 400-402:
6 Անդ էջ 108:
7 Տե՛ս **Գար. Զարպհանալեան**, «*Պատմութիւն հայ հին դպրութեան*», էջ 334:
8 Անդ:
9 Եղիշէ, անդ, էջ 8::
10 Անդ
11 Անդ, էջ 6:
12 Անդ. էջ 6-8:
13 Անդ. էջ 8:
14 Անդ:
15 Անդ, էջ 6-8:
16 **Իոզէֆ Մարկուարտ**, *Հայոց այբուբենի ծագումը եւ սբ. Մաշտոցի կենսագրութիւնը*, տե՛ս «**Մեսրոպ Մաշտոց**», *Յօդուածների ժողովածու*, Երեւան, 1962, էջ 127:
17 Անդ, էջ 104:
18 Անդ, էջ 18:
19 Անդ:
20 Անդ, էջ34-36:
21 Անդ էջ 52:
22 Անդ, էջ 202:
23 Անդ, էջ 104:
24 Անդ:
25 Անդ:
26 Անդ:
27 Անդ էջ 80:
28 Անդ 82:
29 Անդ էջ 118:
30 Անդ էջ 206-208:
31 Անդ, էջ 20:
32 Տե՛ս անդ, էջ 210-214:
33 Անդ էջ 392:

© National Library of Armenia

34 Անդ էջ 392-394:
35 Անդ:
36 Անդ:
37 Անդ, էջ 114:
38 Անդ, էջ 134:
39 Անդ, էջ 112:
40 Անդ:
41 Անդ, էջ 120:
42 Անդ, էջ 120-122:
43 Անդ:
44 Անդ, էջ 182:
45 Անդ, էջ 44:
46 Անդ, էջ 46:
47 Անդ:
48 Անդ:
49 Անդ:
50 Անդ, էջ 12:
51 Անդ, էջ 85:
52 Անդ, էջ 16:
53 Անդ, էջ 30:
54 Անդ, էջ 210:
55 Անդ, էջ 28:
56 Անդ:
57 Անդ, էջ 28-30:
58 Անդ, էջ 28:
59 Անդ:
60 Անդ:
61 Անդ, էջ 202:
62 Անդ, էջ 228:
63 Անդ:
64 Անդ, էջ 222:
65 Անդ, էջ 406:
66 Անդ, էջ 202-204:
67 Անդ, էջ 144:
68 Անդ:
69 Անդ, էջ 392:
70 Անդ, էջ 328-330:
71 Անդ, էջ 240:
72 Անդ, էջ 166:
73 Անդ, էջ 70:
74 Անդ:
75 Անդ, էջ 172:
76 Անդ, էջ 8:

ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԼԱՍԻՑԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Լեւոն Լաճիկեան

Հայ գեղագիտական մտքի պատմութեան սակաւ ուսումնասիրուած՝ շրջաններից է 17-18-րդ դարերն ընդգրկող ժամանակաշրջանը: Մասնագիտական գրականութեան մէջ բաւարար ուշադրութեան չի արժանացել մանաւանդ այդ հարիւրամեակների միջակայ ժամանակահատուածը: Դա բացատրւում է նախեւառաջ այն հանգամանքով, որ մինչեւ այժմ հայագիտական ստուար գրականութեան մէջ չկայ յիշեալ շրջանի պատմամշակութային յստակ ու գիտականօրէն հաւաստի բնութագիրը[1]: 17-րդ դարի վերջը եւ 18-րդ դարասկիզբը մեզ մօտ մերթ համարւում է միջնադարի վերջ կամ ուշ միջնադարի ժամանակաշրջան, մերթ՝ նոր ժամանակների սկիզբ: Նման տարակարծութիւնների առկայութեան եւ միասնական բնութագրի չգոյութեան պայմաններում, բնականաբար, խօսք չի կարող լինել նոյն ժամանակի մշակութային բազմապիսի երեւոյթների ճշգրիտ արժէքաւորման եւ գնահատութեան հարցում հայեացքների քիչ թէ շատ ընդհանրութեան մասին[2]:

* * *

15-16-րդ դարերի հայ գիտամշակութային կեանքի խոր անկումից յետոյ 17-րդ դարի առաջին տասնամեակներից սկսւում է մտաւոր զարթօնքի եւ վերանորոգութեան հետզհետէ հզօրացող շարժումը, որը ներթափանցում է մեր իրականութեան գրեթէ բոլոր ոլորտները: Այդ մասին Մանուկ Աբեղեանը գրում է. «Սկսուեցաւ մի վերածնութեան շրջան հայոց կեանքի եւ գրականութեան մէջ, որ սկզբում շատ դանդաղ գնաց Հայաստանի անկայուն քաղաքական դրութեան պատճառով եւ յետոյ շատ արագ քայլելով, երբ այս դարու (խօսքը 17-րդ դարի մասին է – Լ. Լ.) առաջին քառորդից յետոյ այդ ամէն տարուայ պատերազմներին վերջ դրուեցաւ»[3]:

Այդ շարժումը նոր թափ է ստանում 17-րդ դ. վերջին եւ 18-րդ դ. սկզբին: Ցաջողութիւնները փիլիսոփայութեան եւ արուեստի բնագաւառներում, նաեւ շփումը ժամանակի եւրոպական արուեստի ու գեղագիտական տեսութիւնների հետ նպաստաւոր պայմաններ ստեղծեցին հայ գեղագիտական մտքի հետագայ զարգացման համար: Քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ գիտամշակութային առումով այս շրջանը հայ ժողովրդի պատմութեան բարդ ու հակասական շրջաններից է: Այն իրենից ներկայացնում է միջնադարից նոր ժամանակներին անցման բեկումնային մի դարաշրջան, որում հինն ու նորը գոյակցում էին կողք կողքի՝ յաճախ պայմանաւորելով ժամանակի հայ մտածողների աշխարհայեացքային հակասութիւնները:

Յիշեալ հարիւրամեակների սահմանագծում գործել են հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ Մատթէոս եւ Ղուկաս Վանանդեցիները, Յովհաննէս Ջուղայեցին, Խաչատուր Էրզրումեցին եւ Մխիթար Սեբաստացին, որոնք անուրանալի վաստակ ունեն նաեւ հայ գեղագիտական մտքի զարգացման գործում: Համեմատած նրանց թողած տեսական-փիլիսոփայական հարուստ ժառանգութեան եւ հայ մշակոյթին բերած իրական նպաստի հետ,

© National Library of Armenia